Կարգապահական գործ թիվ ԿԳ-14113

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի փետրվարի 27-ի թիվ 44-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/35-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄՀԵՐ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև Պալատ) խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Լուսինե Սահակյանի կազմով, քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Միեր Բադալյանի (արտոնագիր № 1005) (այսուհետ նաև՝Պատասխանող), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

27.08.2014 թվականին Պալատ է ստացվել Ջուլետա Ղահրամանյանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը՝ փաստաբան Միեր Բադալյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Դիմողը նշել է, որ ժառանգության հարցով իրավական օգնություն ստանալու նպատակով Պատասխանողի հետ 20.01.2014թ. (պայմանագրում նշված է՝ 20 հունիս 2014թ.) կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի 7-րդ կետի համաձայն փաստաբանին պետք է վճարվեր 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

Դիմողը նշել է, որ չնայած Պայմանագրով վերը նշված գումարը սահմանված լինելուն՝ Պատասխանողի պահանջով վերջինիս վճարել է ընդհանուրը 1.403.500 (մեկ միլիոն չորս հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար:

Դիմողը նաև հայտնել է, որ Պատասխանողը մինչ օրս պայմանագրի հիման վրա որևէ գործողություն չի կատարել և որևէ ծառայություն չի մատուցել, այլ վիրավորել է իրեն և հրաժարվել հետ վերադարձնել գործի նյութերը և վճարված գումարը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.09.2014 թվականի թիվ 318-Ա/ԿԳ 14113 որոշմամբ փաստաբան Միեր Բադալյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.3.1 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Տվյալ կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել Ջուլետա Ղահրամանյանը, կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Արթուր Մարտիրոսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը նշել է, որ ժառանգության հարցով իրավական օգնություն ստանալու նպատակով Պատասխանողի հետ 20.01.2014թ. (պայմանագրում նշված է՝ 20 հունիս 2014թ.) կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի 7-րդ կետի համաձայն փաստաբանին պետք է վճարվեր 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

Դիմողը նշել է, որ չնայած Պայմանագրով վերը նշված գումարը սահմանված լինելուն՝ Պատասխանողի պահանջով վերջինիս վճարել է ընդհանուրը 1.403.500 (մեկ միլիոն չորս հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար:

Դիմողը նաև հայտնել է, որ Պատասխանողը մինչ օրս պայմանագրի հիման վրա որևէ գործողություն չի կատարել և որևէ ծառայություն չի մատուցել, այլ վիրավորել է իրեն և հրաժարվել հետ վերադարձնել գործի նյութերը և վճարված գումարը:

Այնուհետև, Դիմող Ջ.Ղահրամանյանը իր 31.10.2014թ. բացատրության մեջ հայտնել է, որ՝ «2013թ. հունիսի 20-ին Միեր Բադալյանի հետ կնքեցի պայմանագիր և պարտավորվեցի վճարել իր ծառայությունների համար՝ պայմանագրով սահմանված 200.000 ՀՀ դրամ... Դրանից հետո Միեր Բադալյանը բարեխիղճ կերպով նախապատրաստել է փաստաթղթերը դատարան դիմելու համար, որից հետո մասնակցել է դատական նիստերին՝ մոտ ութ անգամ: ... Հայտնում եմ, որ Միեր Բադալյանից փաստաթղթերը հետ պահանջելու ժամանակ նա ինձ որևէ կերպ չի վիրավորել, միայն ասած, որ իրեն վճարված գումարները հետ չի վերադարձնի»: Ինչպես վերը մեջբերվածից, այնպես էլ Դիմողի հետ կարգապահական գործ նախապատրաստող փաստաբան Արթուր Մարտիրոսյանի հետ ունեցած անձնական զրույցի ժամանակ, վերջինս հերքել է այն հանգամանքը, որ փաստաբան Միեր Բադալյանը որևէ գործողություն չի կատարել և որևէ ծառայություն չի մատուցել, ինչպես նաև, որ վիրավորել է իրեն:

Ավելին. Պալատ ներկայացված 27.08.2014թ. դիմումը Ջ.Ղահրամանյանն անձամբ չի կազմել, այն, իր խնդրանքով, կազմվել է Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի վրա գտնվող մի փաստաբանական գրասենյակում, որից հետո Դիմողն այն ստորագրել և ներկայացրել է Պալատ, մանրամասն չծանոթանալով դրա բովանդակության հետ:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Հարուցված կարգապահական վարույթի կապակցությամբ Պատասխանողը բացատրություն է ներկայացրել Պալատ, որով հայտնել է, որ 2013թ. հունիսի 20-ին Դիմողի հետ կնքել է փաստաբանական ծառայության մատուցման պայմանագիր, որի 3-րդ կետի համաձայն վերջինիս ծառայություն պետք է մատուցվեր՝ բնակելի տան սեփականության իրավունքի ճանաչման, ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության վկայականների անվավեր ճանաչման պահանջի շրջանակներում:

Դիմողը ցանկություն էր հայտնել, իր ամուսնու՝ Վլադիմիր Մուշեղի Սարգսյանի կողմից կառուցված՝ Սյունիքի մարզ, Մեղրի քաղաք, Մ.Օհանջանյան փող., 1-ին նրբ., 9-րդ տուն հասցեում գտնվող անշարժ գույքի մի մասի նկատմամբ իրավունքները, որպիսիք ըստ կտակի ժառանգության իրավունքի անցել էին իր ամուսնու զարմիկ՝ Վանիկ Վիլիկի Սարգսյանին, դատական կարգով անվավեր ճանաչել, այդ թվում՝ 20.01.1967թ. կտակը, 10.12.1981թ. ըստ կտակի ժառանգության վկայագիրը և դրա հիման վրա անշարժ գույքի գրանցումը, որից հետո ըստ օրենքի ժառանգության իրավունքով իր ամուսնու գույքը հետ վերադարձնել:

Պատասխանողի խոսքերով, մի քանի ամիսների ընթացքում, պետական և այլ մարմիններից, մասնավորապես՝ մարզային արխիվից, կադաստրից, նոտարական գրասենյակից և այլ համապատասխան մարմիներից հարցումների միջոցով հավաքագրել է անհրաժեշտ ապացույցները: Պատասխանողը կազմել է հայցադիմում և 2013թ. հոկտեմբերի 22-ին այն ներկայացրել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որի 23.10.2013թ. որոշումով հայցադիմումը ընդունվել է վարույթ, այնուհետև անցկացվել են մի շարք դատական նիստեր, որոնց Պատասխանողը մասնակցել է անձամբ՝ 14.11.2014թ., 26.11.2013թ., 18.12.2013թ., 23.01.2014թ., 19.02.2014թ., 20.03.2014թ. և 09.04.2014թ.: Նշված դատական նիստերի ժամանակ Պատասխանողը ներկայացրել է միջնորդություններ՝ ապացույցներ պահանջելու և պատասխանողներին՝ գործով ցուցմունք տալուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Ելնելով Դիմողի շահերի արդյունավետ պաշտպանության նկատառումից, նախնական դատական նիստի ժամանակ Պատասխանողը գրավոր դիմել է դատարանին հայցից հրաժարվելու խնդրանքով, քանի որ գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն եղել գործը շարունակելու համար:

Դատարանի 10.04.2014թ. թիվ ՍԴ/0424/02/13թ. վճռով գործի վարույթը կարճվել է:

Մի քանի ամիսների ընթացքում անհրաժեշտ ապացույցներ ձերք բերելուց և կարևոր հանգամանքներ պարզելուց հետո, Պատասխանողը 2014թ. օգոստոսի 8-ին կրկին դիմել է դատարան, սակայն Դիմողը, այցելելով Պատասխանողի գրասենյակ, հայտնել է, որ հրաժարվում է Պատասխանողի ծառայությունից և պահանջել է

դադարեցնել իրեն մատուցվող ծառայությունները, պատճառաբանելով, որ մեկնում է ՌԴ՝ մշտական բնակության:

Ինչ վերաբերում է Ջուլետա Ղահրամանյանի դիմումի մեջ նշված այն տեղեկություններին, որ Պատասխանողն իր ծառայությունների մատուցման համար Դիմողից պահանջել և ստացել է 1.403.500 /մեկ միլիոն չորս հարյուր երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումար, Պատասխանողի պնդմամբ այն իրականությանը չի համապատասխանում: Դիմողն անգամ չի վճարել Պայմանագրի 7-րդ կետով սահմանված ծառայության գինը՝ 200.000 ՀՀ դրամ գումարը, այն չի փոխանցել Պայմանագրով սահմանված կարգով Կատարողի բանկային հաշվին, որը նշված է պայմանագրի մեջ, այսինքն, որպես Պայմանագրի կողմ, Պայմանագրի 9-րդ կետի «դ» ենթակետի տեսանկյունից Պատասխանողը կարող էր այդ հիմքով հրաժարվել Պայմանագրով սահմանված իր պարտականությունների կատարումից, այսինքն՝ կարող էր ծառայություններ չմատուցեր Դիմողին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջուլետա Ղահրամանյանը իր բարեկամն է, անտեսել է չվճարելու հանգամանքը և ծառայություններ է մատուցել նրա խախտված իրավունքների վերականգնման համար:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Արթուր Մարտիրոսյանին, ով 07.11.2014 թվականին խորհրդին ներկայացրել է եզրակացություն, որով հայտնել է դիրքորոշում առ այն, որ պատասխանող Միեր Բաղայանի արարքում բացակայում են Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.3.1 և 3.5.5 ենթակետերով սահմանված խախտումների հատկանիշներ: Խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանս գործը ստացել եմ 2014թ. նոյեմբերի 19-ին:

Սույն գործով Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի փետրվարի 27-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ): Տեղի ունեցած նիստին Կողմերից ոչ Դիմողը և ոչ էլ Պատասխանողը չէին ներկայացել:

5.Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Պալատի խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Միեր Բադալյանի և ՀՀ քաղաքացի Ջուլետա Ղահրամանյանի միջև 20.06.2013թ. կնքված փաստաբանական ծառայության մատուցման պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուին (Ջուլետա Ղահրամանյանին) ծառայություն պետք է մատուցվեր՝ բնակելի տան սեփականության իրավունքի ճանաչման, ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության վկայականների անվավեր ճանաչման պահանջի շրջանակներում:

2. 22.10.2013 թվականին Փաստաբան Միեր Բադալյանը հայցադիմում է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի 23.10.2013թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, այնուհետև անցկացվել են մի շարք դատական նիստեր, որոնց Պատասխանողը մասնակցել է անձամբ՝ 14.11.2013թ., 26.11.2013թ., 18.12.2013թ., 23.01.2014թ., 19.02.2014թ., 20.03.2014թ. և 09.04.2014թ.:

3. Փաստաբան Միեր Բադալյանի և ՀՀ քաղաքացի Ջուլետա Ղահրամանյանի միջև 20.06.2013թ. կնքված փաստաբանական ծառայության մատուցման պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ Կողմերի համաձայնությամբ նույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված ծառայությունների գինը կազմում է 200 000 ՀՀ դրամ: Ծառայությունների դիմաց՝ Պատվիրատուն սույն պայմանգրի 7-րդ կետում նշված գումարը վճարում է պայմանգրի կնքելու օրը՝ բանկային հաշվին՝ 2470801265650010 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Կապանի մասնաճյուղ:

4. Առկա չէ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման գնի և 1.403.500 /մեկ միլիոն չորս հարյուր երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ որևէ ապացույց:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պատասխանողի նկատմամբ 2010-2015թ. ընկած ժամանակահատվածում հարուցվել է 3 կարգապահական վարույթ՝.

- 07.11.2011թ. անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով (կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով),
- 18.04.2014թ. փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.2 և 2.8.1 ենթակետերի խախտման հիմքով (կարգապահական վարույթը կարճվել է),
- 21.01.2015թ. փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 և 3.2.5 ենթակետերի խախտման հիմքով (կարգապահական վարույթը կարճվել է):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Միեր Բադալյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետը սահմանում է, որ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Միեր Բադալյանը մինչ օրս պայմանագրի հիման վրա որևէ գործողություն չի կատարել և որևէ ծառայություն չի մատուցել, այլ վիրավորել է իրեն և հրաժարվել հետ վերադարձնել գործի նյութերը:

Կարգապահական վարույթի ընթացքում նշված փաստերը չեն հաստատվել և հերքվել են հենց Ջ.Ղահրամանյանի բացատրությունով և վարույթով ձեռք բերված այլ ապացույցներով: Մասնավորապես.

Դիմող Ջ.Ղահրամանյանը իր 31.10.2014թ. բացատրության մեջ հայտնել է, որ՝ «2013թ. հունիսի 20-ին Միեր Բադալյանի հետ կնքեցի պայմանագիր և պարտավորվեցի վճարել իր ծառայությունների համար՝ պայմանագրով սահմանված 200.000 ՀՀ դրամ... Դրանից հետո Միեր Բադալյանը բարեխիղճ կերպով նախապատրաստել է փաստաթղթերը դատարան դիմելու համար, որից հետո մասնակցել է դատական նիստերին՝ մոտ ութ անգամ: ... Հայտնում եմ, որ Միեր Բադալյանից փաստաթղթերը հետ պահանջելու ժամանակ նա ինձ որևէ կերպ չի վիրավորել, միայն ասած, որ իրեն վճարված գումարները հետ չի վերադարձնի»: Ինչպես վերը մեջբերվածից, այնպես էլ Դիմողի հետ կարգապահական գործ նախապատրաստող փաստաբան Արթուր Մարտիրոսյանի հետ ունեցած անձնական զրույցի ժամանակ, վերջինս հերքել է այն հանգամանքը, որ փաստաբան Միեր Բադալյանը որևէ գործողություն չի կատարել և որևէ ծառայություն չի մատուցել, ինչպես նաև, որ վիրավորել է իրեն:

Ավելին. Պալատ ներկայացված 27.08.2014թ. դիմումը Ջ.Ղահրամանյանն անձամբ չի կազմել, այն, իր խնդրանքով, կազմվել է Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի վրա գտնվող մի փաստաբանական գրասենյակում, որից հետո Դիմողն այն ստորագրել և ներկայացրել է Պալատ, մանրամասն չծանոթանալով դրա բովանդակության հետ:

Այն հանգամանքը, որ փաստաբան Միեր Բադալյանը Պայմանագրի հիման վրա որևէ գործողություն չի կատարել և Դիմողին որևէ ծառայություն չի մատուցել, հերքվել է նաև վարույթով ձեռք բերված այլ ապացույցների հիման վրա: Այսպես.

Դիմողի հետ Պայմանագիր կնքելուց հետո Պատասխանողը պետական և այլ մարմիներ, մասնավորապես՝ մարզային արխիվ, անշարժ գույքի կադաստր, նոտարական գրասենյակ, ներկայացրել է հարցումներ և ձեռք է բերել անհրաժեշտ

գրավոր ապացույցներ հայցադիմում կազմելու և դատական կարգով Դիմողի գույքային իրավունքները վերականգնելու և պաշտպանելու համար: Պատասխանողը կազմել է հայցադիմում և 2013թ. հոկտեմբերի 22-ին այն ներկայացրել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի 23.10.2013թ. որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել և նշանակվել է նախնական դատական նիստ: Ինչպես նախնական, այնպես էլ հաջորդող յոթ դատական նիստերին Պատասխանողը մասնակցել է անձամբ, նիստերի ժամանակ տարբեր միջնորդություններ է ներկայացրել, այդ թվում՝ ապացույցներ ձեռք բերելու, պատասխանողներին քաղաքացիական գործով ցուցմունք տալուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Նախնական դատական նիստի ժամանակ Պատասխանողը գրավոր կարգով դիմել է դատարան հայցից հրաժարվելու խնդրանքով, քանի որ չի կարողացել ձեռք բերել վեճի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ: Ուստի հետագա մի քանի ամիսների ընթացքում անհրաժեշտ ապացույցներ ձերք բերելուց և վեճի լուծման համար կարևոր հանգամանքներ պարզելուց հետո Պատասխանողը 2014թ. օգոստոսի 8-ին վեր նշված հայցապահանջով հայցադիմում է ներկայացրել դատարան:

Պատասխանողը Դիմողին իրավական օգնություն է ցույց տվել իր մասնագիտական կարողությունների սահմաններում, անհրաժեշտ գործողություններ է կատարել և համապատասխան քայլեր է ձեռնարկել Դիմողի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքները ուսումնասիրելու և հանձնարարությունը պատշաճ կատարելու համար:

Ինչ վերաբերվում է Հոնորարի իրական չափը Դիմողին չբացահայտելու հանգամանքին, ապա Կանոնագրքի 3.3.1 ենթակետով սահմանված կանոնի համաձայն՝ վարձատրությունը (հոնորարը), որը փաստաբանական գրասենյակը ստանում է, պետք է ամբողջապես բացահայտվի վստահորդին: Հոնորարի չափի և վճարման կարգի շուրջ համաձայնության են գալիս կողմերը՝ իրենց հայեցողությամբ: Հոնորարի չափի մեջ չի ներառում փաստաբանի կատարած այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար (մասնավորապես՝ տրանսպորտային, թարգմանչական կամ մասնագետներին հրավիրելու, տպագրության, պատճենահանման, փոստային և նոտարական ծախսերը, ինչպես նաև այլ դատական ծախսերը), եթե կողմերի համաձայնությամբ այլ բան չի նախատեսվել:

Ինչպես հայտնի է, Փաստաբանի հոնորարի չափը և վճարման կարգը հանդիսանում են վճարովի հիմունքներով փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի բովանդակության էական պայմաններ:

Դիմողը նշել է, որ Պայմանագրի համաձայն փաստաբան Միեր Բադալյանին վճարման ենթակա ծառայության գինը կազմում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, սակայն ըստ Դիմողի՝ վերջինս փաստաբան Միեր Բադալյանի պահանջով լրացուցիչ վճարել է ընդհանուր առմամբ՝ 1.403.500 (մեկ միլիոն չորս հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, որը Պայմանագրով նախատեսված չի եղել:

Կարգապահական վարույթի ընթացքում նշված փաստը նույնպես չի հաստատվել և մասնակիորեն հերքվել են Ջ.Ղահրամանյանի բացատրությունով և վարույթով ձեռք բերված այլ ապացույցներով: Մասնավորապես.

Դիմող Ջ.Ղահրամանյանը իր 31.10.2014թ. բացատրության մեջ հայտնել է. «Ձեր

բարձրացված հարցի վերաբերյալ հայտնում եմ, որ Միեր Բադալյանը ինձանից 1.403.500 ՀՀ դրամ ստացել է, թե ոչ, ստույգ պատասխան տալ չեմ կարող, քանի որ վճարումների վերաբերյալ իմ գրառումների տետրից դա հստակ չի հետևում, իսկ այլ հիմքեր ինձ մոտ առկա չեն: Հայտնում եմ, որ 1.403.500 դրամ գումարը նշվել է իմ 27.08.2014թ. դիմումի մեջ, որը իմ խնդրանքով կազմվել է ք.Երևան, Արշակունյաց փողոցի վրա գտնվող մի փաստաբանական գրասենյակում, սակայն նշված գումարի իրական չափերի վերաբերյալ հիմքեր ինձ մոտ առկա չեն»:

Չնայած Դիմողն իր բացատրություններում պնդում է, որ Պատասխանողի պահանջով վերջինիս առձեռն վճարել է՝ ա/ միանվագ՝ 200.000 ՀՀ դրամ, բ/ յուրաքանչյուր ամիս՝ 16.000-20.000 ՀՀ դրամ գումար, չմասնավորեցնելով՝ քանի՞ ամիս է կատարել վճարումները և կոնկրետ ի՞նչ ծառայությունների համար, սակայն Դիմողի կողմից վկայակոչված այս փաստական հանգամանքները որևէ կերպ չեն հիմնավորվել:

Դիմողի և Պատասխանողի միջև 20.06.2013թ. ստորագրված և կնքված «Փաստաբանական ծառայություն մատուցման մասին» Պայմանագրի 7-րդ կետի համաձայն. «Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված Ծառայությունների գինը կազմում է 200.000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ: Ծառայությունների դիմաց՝ Պատվիրատուն սույն Պայմանագրի 7-րդ կետում նշված գումարը վճարում է պայմանագրի կնքելու օրը՝ բանկային հաշվին՝ 2470801265650010 «Արշինինվեստբանկ» ՓԲԸ Կապանի մասնաճյուղ» (գ.թ.2, 15): Պայմանագրի մեջբերված դրույթով կողմերը սահմանել են մատուցված ծառայությունների դիմաց վճարման կարգ, այն է՝ անկանխիկ, բանկային փոխանցման եղանակով, որպիսի պայմաններում նման վճարում կատարելը հավաստող վերաբերելի ապացույց կարող էր հանդիսանալ համապատասխան վճարման հանձնարարականը կամ վճարման անդորրագիրը, սակայն Պատասխանողին ծառայության դիմաց վճարումներ կատարելու վերաբերյալ իր բացատրություններում Դիմողը հայտնել է, որ վճարումները երբեք չի կատարել բանկային փոխանցումներով, ուստի դրանց վերաբերյալ գրավոր փաստաթղթեր առկա չեն: Դիմողի մոտ առկա չեն նաև այլ որևէ ապացույցներ Պատասխանողին առձեռն վճարումներ կատարելու վերաբերյալ:

Միեր Բադալյանին 1.403.500 ՀՀ դրամ ծառայության վճար առձեռն փոխանցելու կապակցությամբ, Դիմողի պնդումներին հակառակ, Պատասխանողն իր բացատրության մեջ հայտնել է, որ՝ «այն իրականությանը չի համապատասխանում: Ջուլետա Ղահրամանյանը Պայմանագրի 7-րդ կետով սահմանված ծառայության գինը՝ 200.000 ՀՀ դրամ գումարը՝ չի վճարել պայմանագրով սահմանված կարգով Կատարողի բանկային հաշվին, որը նշված է պայմանագրի մեջ, այսինքն ես որպես պայմանագրի կողմ և Պայմանագրի 9-րդ կետի «գ» ենթակետի համաձայն կարող էի այդ հիմքով հրաժարվել սույն պայմանագրով սահմանված իմ պարտականություններից, այսինքն ծառայություններ չմատուցել Պատվիրատուին, սակայն Ջուլետա Ղահրամանյանը իմ հեռավոր բարեկամներից էր, անտեսել էի այդ հանգամանքը և ծառայություններ եմ մատուցել նրա խախտված իրավունքների վերականգնման համար»:

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի կանոնի համաձայն. «Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը»:

Նույն կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Եթե բոլոր ապացույցների

հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը»:

Դիմումի համաձայն, Դիմողը փաստաբան Միեր Բադալյանի պահանջով վերջինիս վճարել է ընդամենը 1.403.500 (մեկ միլիոն չորս հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար: Սակայն նշված պնդումները Դիմողի կողմից որևէ կերպ չի հիմնավորվել, մասնավորապես՝ չի ապացուցվել, որ Միեր Բադալյանը Դիմողից որևէ եղանակով ստացել է որևէ չափի գումար: Մինչդեռ Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է, որ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ նույն կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.09.2014 թվականի թիվ 318-Ա/ԿԳ 14113 որոշմամբ փաստաբան Միեր Բադալյանի նկատմամբ հարուցված (արտոնագիր № 1005) կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմող Ջուլետա Ղահրամանյանին և փաստաբան Միեր Բադալյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյան